ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Է ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՄԲ ՄԵԿՆԵՑ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Հուլիսի 30-ի վաղ առավոտյան, Երևան-Ամստերդամ չվերթով, Հարավային Ամերիկա մեկնեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ իր անդրանիկ հովվապետական այցելությունը տալու Բրազիլիայի, Ուրուգվայի և Արգենտինայի հայ համայնքներին:

Վեհափառ Հայրապետը օգոստոսի 1-5-ը հանդիպումներ կունենա Բրազիլիայի հայ հավատացյալների հետ, 5-7-ը՝ Ուրուգվայի, իսկ օգոստոսի 7-14-ը այցելություն կտա Արգենտինայի հայ համայնքին:

Հայ հոգևոր առաջնորդների, ժողովրդական մարմինների ու հավատացյալ ժողովրդի հետ հանդիպումներից բացի, Վեհափառ Հայրապետը այցելություն կտա նաև վերոհիշյալ երկրների նախագահներին և կառավարության պատասխանատու պաշտոնյաներին:

***

«Էջմիածին» ամսագրի այս միացյալ համարում ներկայացնում ենք Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետի Հարավային Ամերիկա կատարած անդրանիկ հովվապետական այցելության համառոտ նկարագրությունը:

Խմբագրությունը ողջունում է Վեհափառ Հայրապետի վերադարձը՝ մաղթելով նրան քաջառողջություն և արդյունաշատ գործունեություն՝ ի փառս Մայր Աթոռի պայծառության և հայրենի ու աշխարհասփյուռ հայության: